

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
12 հուլիսի 2011 թ.
Պետական գրանցման թիվ 12411313

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

20 հունիսի 2011 թ.
ք. Երևան

N 1577-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՏԵՍԱԶԱՅՆԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀՍԿԻՉ ՆՇԱՆՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ) ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ
ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀՍԿԻՉ ՆՇԱՆՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ)
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

- 1) տեսաձայնային մագնիսական կրիչների դրոշմավորման համար հսկիչ նշանների (դրոշմապիտակների) ձեռքբերման հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,
- 2) տեսաձայնային մագնիսական կրիչների դրոշմավորման համար նախկինում ձեռք բերված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) օգտագործման մասին հաշվետվության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահ**

Գ. Խաչատրյան

Հավելված N 1
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2011 թվականի հունիսի 20-ի
N 1577-Ն հրամանի

Հ Ա Յ Տ		Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)	
ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՍԿԻՉ ՆՇԱՆՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ) ՁԵՌՔԲԵՐՄԱՆ			
1. Հարկ վճարողի հաշվառման համարը			
2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)			
3. Գտնվելու վայրը			
4. Դրոշմապիտակների պահանջվող քանակները			
Հ/հ	Մագնիսական կրիչի		Պահանջվող հսկիչ նշանների (դրոշմապիտակների) քանակը (հատ)
	Տեսակը	Անվանումը (համառոտ բովանդակությունը)	
	Ընդամենը		

5. Հայտին կից ներկայացվում է՝

1) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) ձեռքբերման համար պետական բյուջե վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը _____ էջ

2) նախկինում ձեռք բերված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) օգտագործման մասին հաշվետվությունը _____ էջ

3) տվյալ ապրանքային նշանի օգտագործման կամ սեփականության իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները _____ էջ

4) հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) ստացող անձի լիազորագիրը _____ էջ

Ընդամենը _____ էջ

Հայտի ներկայացման _____ 20 ____ թ.
 (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Հայտը ներկայացնողի _____
 (ստորագրությունը) _____
 (անունը, ազգանունը)

Հավելված N 2
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի
2011 թվականի հունիսի 20-ի
N 1577-Ն հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿՐԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀՍԿԻՉ ՆՇԱՆՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱՊԻՏԱԿՆԵՐԻ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)						
1. Հարկ վճարողի հաշվառման համարը							
2. Իրավաբանական անձի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)							
3. Գտնվելու վայրը							
4. Նախկինում ձեռք բերված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) օգտագործման մասին							Քանակը (հատ)
1) նախորդ հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ առկա չօգտագործված դրոշմապիտակների մնացորդը							
2) նախորդ հայտով ձեռք բերված դրոշմապիտակներ							
3) նախորդ հաշվետվությունը ներկայացնելուց հետո օգտագործված դրոշմապիտակներ							
4) նախորդ հաշվետվությունը ներկայացնելուց հետո վնասված և հարկային մարմնին վերադարձված դրոշմապիտակներ							
5) հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ առկա չօգտագործված դրոշմապիտակների մնացորդը							

Հաշվետվության ներկայացման _____ 20 ____ թ.
 (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)

Հաշվետվությունը _____
 ներկայացնողի (ստորագրությունը) (անունը, ազգանունը)